ԴՐՈՒԱԳՆԵՐ ՐԱՖՖՈՒ ԵՒ ՆԱԶԱՐԵԱՆԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՑ

Ստեփանոս Նազարեանի ու Րաֆֆու գաղափարական առնչակցութիւնը, նրանց նամակագրական կապն ու մտերմութիւնը, վերջինիս ստեղծագործական աղերսները «Հիւսիսափայլի» հետ եւ ապա ամսագրի չուրջը համախմբուած մտաւորականութեան՝ Մ. Նալբանդեանի, Ս. Շահազիզի, Յովհաննէս Քաթանեանի ու Քալֆաեանների նրա դրսեւորած վերաբերմունքը եղել ու ճնում է Րաֆֆու ստեղծագործական կեանքի ամենաուշագրաւ ու ցարդ չուսումնասիրուած կողմերից մէկը:

Րաֆֆու ինչպէս նաեւ Ստեփանոս Նազարեանի ձեռագրերի կորստեան հետեւանքով այսօր դժուար է ամբողջական կարծիք կազմել նրանց մտերմութեան չափի, նամակագրական կապի ու բարեկամութեան բնոյթի մասին, սակայն անուղղակի փաստերը ցոյց են տալիս, որ այս երկու մեծերի համագործակցութիւնը եղել է չատ աւելի դործնական, խորն ու տեւական քան այդ մասին տեղեկութիւններ են պարունակում մեզ հասած սակաւաթիւ վաւերագրերը:

Հօր՝ Մելիք-Միրզաբեկի առեւտրական տան գործերի բերումով գալով Թիֆլիս երիտասարդ Րաֆֆին հանդիպում է ուսանողական չրջանի իր ընկերներին, բարեկամներին ու ծանօթներին: Այցելում է Ներսիսեան դպրոցի վերակացու Յովհաննէս Քաթանեանին, նորոգում ու ամրապնդում է իր կապերը գրավաճառ Ինֆիանճեանի, ռուսական պիմնազիայի վերակացու Յովհաննէս Տէր-Յովսէփեանի ու այլոց հետ:

Իր կրթութիւնը Ներսիսեան դպրոցում չարունակելու առիթով Րաֆֆին լինում է Յովհաննէս Քաթանեանի տանը: Վերջինս նրան է տրամադրում Մոսկուայում նոր լոյս տեսնող «Հիւսիսափայլ» ամսագրի իր ունեցած համարները եւ երկարօրէն զրուցում ու մտքեր են փոխանակում ամսագրում բարձրացուած հարցերի եւ խաւարամիտների ու պահպանողականների դէմ Ներսիսեան դպրոցում տարուող պայքարի մասին:

Այդ նոյն չրջանում Մանգլիսում հանդիսացող Յովհաննէս Տէր-Յովսէփեանցի տունը Րաֆֆին առիթ է ունենում կարդալու նաեւ հենց նոր լոյս տեսած Նաչատուր Աբովեանի «Վէրք Հայաստանի» վէպը: Այս առիթով եւս երիտասարդ Րաֆֆին անքուն դիչերներ է անցկացնում իր բարեկամի հետ:

«Հիւսիսափայլում» հրատարակուած յօդուածները՝ Նալբանդեանի ու Նազարեանի բռնած դիրքը՝ ազգային կեանքի, լուսաւորութեան, աչխարհաբար լեզուի ու նոր դպրականութեան հանդէպ, Ազատու հերոսական կերպարն ու Աբովեանին տանջող «հայրենեաց վէրքը» մտահոգում, խանդավառում ու ոգեւորում են երիտասարդ մտաւորականին, կողմնորոչում ու նոր ընթացք են տալիս նրա հայրենասիրական ու լուսաւորական մղումներին:

Նալբանդեանի ու Նազարեանի գաղափարների անմիջական ազդեցութեան տակ Րաֆֆու մտապատկերներում նորից են կենդանանում Արեւմտեան-Հայաստանում իր տեսածն ու զգացածը: Մինչեն են գալիս փայլուկում հիմնադրելիք դպրոցի առիթով Աւետարանչեան հոդեւոր առաջնորդ Յակոբ Շահրազեանի վարքագծի արդահատելի կողմերը, նրա ու տեղական երեսից ժողովրդի ճաչակած դառնութիւնները: Վչտացած ու յուսահատուած հայրենասէրը, որ ստեղծուած կացութիւնից դուրս գալու եւ համագոյակիցների օգնելու ելք էր որոնում՝ թղթին է յանձնում իր հոգու վրայ ծանրացած «Հայրենեաց վէրքերի ոխսուր գծագրերը» եւ ուղարկում է Մոսկուա «Հիւսիսափայլի» հրատարակողին:

1858 թուականի վերջերին Կովկասից Պարսկաստան մեկնող Րաֆֆին Թիֆլիսից Թաւրիզ էր տանում Աբովեանի «Վէրքը» էրուած կրակուած նրա մատուռներով: Նա Թաւրիզ էր տանում նաեւ «Հիւսիսափայլի» ամսատետրակները, որտեղ Նալբանդեանը ամէն մի «ճշմարտասէր ու բանիմաց հայի վրայ» սրբազան պարտականութիւն էր դնում «պատժել եւ պատուհասել բերանով եւ գրիչով ազգի պակասութիւնքը»: Նալբանդեանի ու Նազարեանի խօսքը նո՛ր չունչ ու ոգի են տալիս երիտասարդ հայրենասէրին, նո՛ր ընթացք, նո՛ր ուղի նրա լուսաւորական գաղափարներին ու դեմոկրատական հակումներին: կարդալով «Վէրքն» ու «Հիւսիսափայլի» ամսատետրակները, խորապէս ըմբռնելով «հասարակին հասկանալի լեզուով գրելու» Աբովեանի, Նալբանդեանի ու Նազարեանի առաջադրած սկզբունքների ներքին իմաստը, Րաֆֆին անվերապահօրէն կանգնում է նոր լեզուի գարգացման դիրքերում, եւ արձանքելով նրանց կոչին գինուորագրուում է աչխարհաբարի տարածմանը:

Անդրադառնալով աչխարհաբար լեզուի հանդէպ իր դրսեւորած վերաբերմունքին, Րաֆֆին անդրանիկ վէպը առաջաբանում խիզախութիւն է ունենում ասելու, որ ինքը սխալուած է եղել: «Մալբին», — գրում է նա, — մեր նոյն ժամանակի գրականութեան հոլւոյն համաձայն գրուած էր գրաբար լեզուով, բայց երբ 1858 թուականին երեւեցաւ պատուական, «Հիւսիսափայլը» տալով մեր լիտերատուրային մի նոր հոգի, մի նոր կեանք պարանք, այն ժամանակ եւ մենք զգացինք մեր սխալը, մեր վէպի հին լեզուն դէպի մեր փոխելով»: Րաֆֆու վերաբերմունքը նորը «Հիւսիսափայլի» հանդէպ չի սահմանափակում միայն աչխարհաբար լեզուով: Ամսագրի միջոցով չփումը՝ Նալբանդեանի ու Նազարեանի գաղափարների հետ՝ խորը հետք են թողնում երիտասարդ Րաֆֆու վաղ չրջանի գրական-ստեղծագործական կեանքի ու աչխարհայեացքի կազմաւորման վրայ: Դառնալով ամսագրի բաժանորդը եւ խորամուխ լինելով այնտեղ արծարծուող խնդիրների մէջ, երիտասարդ հայրենասէրը որոնում եւ գտնում է իրեն զրաղեցնող հարցերի պատասխանը: Այս իմաստով ուչագրաւ է եւ խմաւուրուած նրա մի խոստովանութիւնը. «Անցեալ տարի, — գրում է նա Թիֆլիսը. — Հանդիպեցայ հասկացողուած Յովհաննէս Քաթանեանին, որ ինձ ասացաւ այդ մասին, — մեծ հաճութիւն ստացայ այդ եւրոպական բանագիտութեամբ գրած ու խօսուն տետրակներից: Երկար ժամանակ փափագում էի տեսնել մի այդպիսի օրագրի հրատարակութիւն, որի մէջ ճշմարտութեամբ պատկերանային հայոց ազգի վէրքերը եւ նոցա բժչկութեան համար գործադրելի հնարները: Տայ Աստուած ընդ երկար տեւել «Հիւսիսափայլին» յօդուտ հայրենեաց»:

Սալմաստում Րաֆֆին նորից է անդրադառնում Նալբանդեանի կողմից ամէն մի «ճշմարտասէր ու բանիմաց հայի վրայ» դրած պարտականութեանը, ուստի Աբեւմտեան Հայաստանից իր քաղած տպաւորութիւնները, սրտի խորքում ամբարուած վչտերը, ժողովրդի լուսաւորութեան հարցում ունեցած մտահոգութիւնները ամբողջացնում է «Աղթամարայ վանքը» խորագիրը կրող ակնարկի մէջ ու նախապատրաստւում է այն հրատարակել «Հիւսիսափայլում»: Աւարտելով ու ամբողջացնելով ակնարկը երիտասարդ Րաֆֆին չէր կարող եւ չպէտք է չրջանցէր խմբագիրը Ստեփանոս Նազարեանի ամսագրի բազիր համարում տպագրած, «Ծա-10-րդ ամսատետրակում տպագրած, «Ծանուցումը», ըստ որի նա «Հիւսիսափայլին» թղթակցող հեղինակներից պահանջում էր իրենց աչխատութիւնները ուղարկել որեւէ ճանաչուած անձի երաչխաւորութեամբ: Այս պարագայում միանգամայն հասկանալի է թէ ինչու երիտասարդ, գրական վաստակ ու համբաւ չունեցող Րաֆֆին՝ նպատակայարմար է դտնում իր թղթակցութիւնները «Հիւսիսափայլին» ուղարկել Յովհաննէս Քաթանեանի միջոցով:

1860 թուականի յունուարի 15-ին Րաֆֆին Սալմաստից իր «Աղթամարայ վանքը» ակնարկը մի նամակի հետ ուղարկում է Ստեփանոս Ներսիսեան դպրոցի նախկին վերակացու «Հիւսիսափայլի» «թախտի» համախոհ Յովհաննէս Քաթանեանին, որ եթէ նրան «հաճել թուի» ուղարկի «Մոսկուա պարոն հրատարակչին «Հիւսիսափայլի», որպէսզի նա «տպել տայ իւր օրագրի տետրակներից մինի մէջ»:

«Լսած էր, — տարիներ յետոյ, պատմում է իր յուչերում Յովհաննէս Քաթանեանը Րաֆֆու մասին, — իմ մտերիմ յարաբերութիւնների մասին խմբագրութեան հետ: Ես այդպէս էլ արի, — չարունակում է նա, — թէեւ ձեռագիրը մէկ տարուց աւելի էր, որ ինչ-ինչ պատճառով մնաց մասամբ իմ, մասամբ Նալբանդեանի, մասամբ էլ Նազարեանցի մօտ: Յօդուածի լեզուն Նալբանդեանը մասամբ ուղղել էր եւ աւելի մօտեցրել «Հիւսիսափայլի» լեզուին: Յօդուածը Աղթամարայ վանքն էր նկարագրում»:

1860 թուականին «Հիւսիսափայլի» նոյեմբերի ամսատետրակում Նազարեանը հրատարակում է Րաֆֆու «Աղթամարայ վանքը»

© National Library of Armenia

ակնարկը եւ նրա Յովհաննէս Քաթանեանին ուղղուած նամակը, հետաքրքրութիւն ու հիացմունք պատճառելով ընթերցողներին: Այս նամակում է, որ Րաֆֆին իր բարեկամին խնդրում է 1860 թուականի համար եւս իրեն բաժանորդ գրանցել «Հիւսիսափայլին»:

Հեռաւոր Փայջուկում ստանալով «Հիւսիսափայլի» ամսատետրակները Րաֆֆին կարդում եւ ոգեւորւում է խաւարի ու պահպանողականութեան դէմ, եւ ազգի լուսաւորութեան ու առաջադիմութեան համար՝ Նալբանդեանի ու Նազարեանի ծաւալած պայքարով: Նա տեղեակ էր նաեւ թէ ինչ էր անցնում ու դառնում Մոսկուայում ու Թիֆլիսում ամսագրի դէմ՝ թշնամաբար տրամադրուած պահպանողականի բանակում: Այս հանգամանքը մխանգամայն տրամաբանական է դարձնում նրա մտահոգութիւնն ու անհանգստութիւնը «Հիւսիսափայլի» ճակատագրի համար: 1861 թուականի ապրիլի 25-ին Յովհաննէս Քաթանեանին ուղղուած նամակում Րաֆֆին գրում է· «Արդէն 1861 թուականի 5-րդ ամիսն է, բայց «Հիւսիսափայլի» տետրակները տակաւին հասած չեն ինձ· կասկածում եմ, չէիցէ թէ օրագիրը դադարած լինի»: Նոյն նամակ-յօդուածում ներփակ Րաֆֆին Յովհաննէս Քաթանեանին է ուղարկում իր բանաստեղծութիւններից մի քանիսը: «Ինդրում եմ, — գրում է նա, — այս ոտանաւորները նոյնպէս անկորուստ հասցնել պարոն Նազարեանցի ձեռքը թէ կամի կարող է տպել իւր օրագրի մէջ (չկարծեմ, որ նորա օրագրի ախորժակին ընդդէմ դանուին): Ոտանաւորների հետ անպատշաճ չեմ համարում ուղարկել պարոն Նազարեանցին այս իմ առ Ձեզ գրած նամակը. Պատճառը, նա կարող է տեղեկութիւն ստանալ այն խօսքերէն, որ ես գրած եմ Աարպատականի միսիոնարներու մասին»:

Մեզ համար տակաւին անյայտ պատճառով Րաֆֆու ոտանաւորները «Հիւսիսափայլում» չեն տպագրուել:

Այս նամակի միջոցով միաժամանակ փաստարկւում է Յովհաննէս Քաթանեանի յուշերում տեղ գտած այն հաւաստիացումը, ըստ որի Նալբանդեանն ու Նազարեանը չուրջ մէկ տարի իրենց մօտ պահելով Րաֆֆու «Աղթամարայ վանքը», լրացումներ եւ ուղղումներ են կատարել այնտեղ: «Դարձեալ չնորհակալ եմ, — չարունակում է Րաֆֆին, — պարոն Նազարեանցէն, առաւել յոժ պատճառ, պատուել է մեր դրուածքը տպելով, իւր պատուական օրագրի մէջ, մանաւանդ մշակելով նորա թերութիւնքը»:

1861 թուականի յուլիսին Յովհաննէս Քաթանեանը «Ատրպատականի միսիոնարներու մասին» Րաֆֆու նամակ-յօդուածը իր ղրած մի քանի տողանոց յանձնարարականի հետ, ուղարկում է Մոսկուա Ստեփանոս Նազարեանին:

1861 թուականի նոյեմբերին Նազարեանը «Հիւսիսափայլի» տասնմեկերորդ ամսատետրակում Յովհաննէս Քաթանեանի յանձնարարականի հետ տպագրում է Րաֆֆու յօդուածը: Իր այս նամակ-յօդուածում Րաֆֆին Նազարեանին խոստանում է· «Մի ուրիշ ժամանակ» յօդուած գրել այն մասին, թէ· «Արդեօք Ատրպատականի հայերը եւս մի ժամանակ կ'ենթարկուեն միսիոնարուց ազդեցութեանը, թէ միշտ կպահեն իւրեանց հայրենական կրօնը»: Րաֆֆին իր խոստացած յօդուածը գրելու եւ Նազարեանին ուղարկելու մասին փաստական տեղեկութիւններ մեզ չեն հասել, սակայն, որ Րաֆֆին այդ յօդուածը գրել եւ ուղարկել է Նազարեանին, կասկածից վեր է:

Մինչեւ այստեղ, ինչպէս տեսանք, Րաֆֆու եւ Նազարեանի փոխյարաբերութիւնները իրականացւում էին միջնորդուած կապի օգնութեամբ, որտեղ հանդոյցի երկու ծայրերում չաղկապող օղակի դեր էր կատարում Յովհաննէս Քաթանեանը:

Աւելի ուշ, ինչպէս ցոյց են տալիս մեզ հասած չատ սակաւաթիւ փաստերը, Րաֆֆու եւ Նազարեանի բարեկամութիւնը դառնում է աւելի մտերմական եւ նրանց հաղորդակցութիւնը տեղի է ունենում նամակագրական ուղղակի կապի միջոցով:

Յայտնի է, որ 1868 թուականի մայիսին Ստեփանոս Նազարեանը մի խնդրագիր է ներկայացնում Լուսաւորութեան նախարարութեանը «Լապտեր Հայաստանի» անունով օրագիր հրատարակելու թոյլտուութիւն ստանալու համար: Յանկանալով ձեռնհաս մարդկանց «ընկերակից» դարձնել իր «ձեռնարկութեանը» Նազարեանը նամակներ է գրում Հաչտարխան, Ղզլար, Թիֆլիս ու Բաքու իր համախոհներին եւ առաջարկում է թղթակցութիւններով մասնակցել օրագրի հրատարակման աշխատանքներին: Պէտք է

ենթադրել, որ նա այս նոյն չրջանում նամակներ է գրել նաեւ Թիֆլիսում գտնուող Րաֆֆուն:

1868 թուականի օգոստոսին իր ընկերոջը՝ Աւագ-Խան Աւթանդիլեանին հասցէագրուած նամակում Րաֆֆին գրում է· «Նագրեանից նամակներ եմ ստանում, նա պարտքանջել էր իմ գիրքը («Խլվլիկ» վէպը Խ· Ս·) հանձել էր իմ գիրքը («Խլվլիկ» վէպը Խ· Ս·) Մոսկուա ուղարկել, որ տպի իւր «Լապտեր Հայաստանի» օրագրի մէջ, որ միթք ունի այս տարի ի լոյս ընծայել»:

Այս երկու մէջբերումներից արտաբերուող Րաֆֆին ըստ ձեռք բերուած պայմանաւորութեան՝ պէտք է իր «Խլվլիկ» վէպի ձեռագիրը ուղարկէր Մոսկուա Ստ· Նազարեանին:

Իրականում հենց այդպէս էլ կար, նոյն Թուականի սեպտեմբերի կէսերին «Խլվլիկ» վէպի երկու հատորի ձեռագրերը հասնում են Մոսկուա, Ստեփանոս Նազարեանին: Ցաւօք սրտի, այդ չրջանում, Րաֆֆու նազարեանին ղրած նամակները մեզ չեն հասել, ուստի եւ որեւէ խօսք ասելը դառնում է անհնար: Սակայն, բարեբախտաբար պահպանուել է նոյն առիթով Նազարեանի Րաֆֆուն ղրած նամակը, որտեղ վերջինս խօսելով «Հիւսիսափայլի» դէմ խաւարամիտների ղրած դաւերի ու ամսագրերի խափանման մասին, յոյս է յայտնում, որ «իրաւասութիւն ձեռք բերելուց յետոյ» հնարաւորութիւն կ'ունենայ «Խլվլիկը» տպագրել նոր հրատարակութիւք «Լապտեր Հայաստանի» անունով օրագրի մէջ:

Որոշ ժամանակ անց 1869 թուականի յունուարին Րաֆֆին երեւանում հանդիպում է Ղազարոս Աղայանին: Վերջինիս յուշերից յայտնի է դառնում, որ նրանց խօսակցութիւնը հիմնականում պտտուել է Միքայէլ Նալբանդեանի անձնաւորութեան եւ «Խլվլիկ» ձեռագրերը Նազարեանին ուղարկելու եւ կամ առանձին հարցի չուրջը: Ցուչերից ետ առնալու հարց չուրջը: Ցուչերից ետ առնալու հարց չուրջը: Ցուչերից ետ առնալու հարց